Ամսոյս 5 ին ի Տէր հանգեաւ ԽԱՐԲԳՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ ԳԱԼԷՍ ՏԵԱՆՑ միաբան Մայր Աթոռոյս 63 ամաց հասակում, յետ երկարատև հիւանդութեանց և նոյն ամսոյ 7 ին թաղեցաւ Մայր Աթոռոյ միաբանից գերեզմանատան մէջ։

Հանգուցեալը իւր ուսումը առած էր Մայր Աթոռոյս Ժառանգաւորաց դպրոցում 1842 ից մինչև 51 թ. ձեռնադրուեց սարկաւագ և կուսակրօն քահանայ 1856 թ. կատարեց յաջորդական և վանահայրական պաշտօններ։ 1861 թ. վարձատրուեց վարդապետական լանջական խաչիւ և ծաղկեայ փիլոնիւ, իւր ջերմեռանդ ծառայութեան համար՝ ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ Մատթէոս Կաթուղիկոսից։ 1886 թ. եպիսկոպոս ձեռնադրուեց Ներկայ Վեհ. Հայրապետից և վարձատրուեց պնակէով 1887 թ. Իսկ 1889 թ. կարգուեց նախագահ Վանական Կառավարութեան և վարեց իւր պաշտօնը հաւատարմութեամբ մինչև ի Սեպտեմ. ամիս 1889 ամի։

Տէր լուսաւորեսցէ զՀոգի հանգուցելոյն։